Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝	ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Թեմա՝	Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների ու մոդելների կիրառումը հայոց լեզվի և գրականության դասավանդման գործընթացում
Վերապատրաստող, մենթոր՝	Նարինե Բաղդասարյան
Կատարող՝	Նարինե Միքայելյան

Վանաձոր 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՒ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 6

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը թև է տալիս մարդուն, իսկ թռչել սովորեցնում է ուսուցիչը: Ուսուցչի մանկավարժական գործունեության հիմքում պետք է ընկած լինի սերը. սիրել և՛ աշխատանքը, և՛ աշակերտին: Պիտի ընդունի երեխային այնպիսին, ինչպիսին նա կա, աջակցի, հավատա ու լինի համբերատար:

Հայտնի մանկավարժ, ակադեմիկոս, Մարդասիրական մանկավարժության միջազգային կենտրոնի հիմնադիր Շալվա Ամոնաշվիլին գրում է. «*Մի ուսուցչի մոտ ուսուցման այս կամ այն մեթոդն ստացվում է, մյուսի մոտ՝ ոչ: Առաջինները եզրակացնում են՝ այդ մեթոդը լավն է: Մյուսներն էլ ասումեն՝դրանք բանի պետք չեն: Ո՞րն է խնդիրը:*

Ուսուցման ոչ մի մեթոդ, կրթական ոչ մի համակարգ չի կարելի գնահատել առանց այն իրականացնող ուսուցչի:

Մանկավարժականմեթոդներնուհամակարգերըգտնվումենհոգեկանէներգիայի տիրույթումնդառնումենպիտանիկամանպետք՝կապվածուսուցչիդրականուբացասակ անէներգիայիբնույթից».[2]

Ուսուցիչըպիտիկարողանաուսումնականգործընթացնարդյունավետկազմակերպել, որիհամարանհրաժեշտէ՝

ա. դասըարդյունավետպլանավորել, նպատակներըհստակեցնել,

բ.նյութըհետաքրքիրումատչելիմատուցելուևսովորողներիմեջհետաքրքրություն ննպատակադրումձևավորել,

գ. դասիընթացքումհոգեբանականճիշտմթնոլորտձևավորել,

դ. Դասի արդյունավետ վարման ավանդական և ժամանակակից մեթոդներն ու հնարները նպատակային կիրառել,

ե. Ուսումնական գործընթացին ապահովել ամբողջ դասարանի ներգրավվածությունը,

զ. Սովորեցնել ինքնուրույն մտածել, ստուգել, գնահատել, կարծիք հայտնել, քննադատաբար ընկալել տեղեկատվությունը,

է. Զարգացնել սովորողների խոսքի արտահայտչականությունը, շփման մեջ մտնելու ունակությունը, ինքնավստահությունը, սովորեցնելսխալվելուցչվախենալ, հարգելուրիշիկարծիքը,

ը. արժեքայինճիշտհամակարգձևավորել:

Մայրենիիուսուցմանընթացքումհատկապեսուշադրությունենքդարձնումհաղորդակցական, ստեղծագործական, վերլուծականկարողությունների, ինքնուրույնության, գրավորուբանավորխոսքիզարգացմանը:

Ուսումնականգործընթացիկազմակերպմանկարևորագույնօղակըդասիճիշտպլանավորումնէ, որտեղ հստակեցվում են նպատակներն ու խնդիրները, դեպի դրանք տանող ուղիները՝առաջադրանքներնուհանձնարարությունները, դասի մեթոդական ճիշտ ուղղվածությունն ու հագեցածությունը:

Հետազոտության նպատակն ուխնդիրները

Հետազոտականաշխատանքինպատակնէներկայացնելուսուցմանարդյունավետորոշմեթոդներ, հնարներհայոցլեզվիևգրականությանդասավանդմանգործընթացում:

Խնդիրներն են՝

- հայտնաբերել առավել արդյունավետ մեթոդներ՝ պայմանավորված ուսուցանվող թեմայի բովանդակությամբ,
- վերհանել, ներկայացնել այդ մեթոդների կիրառման առանձնահատկությունները և դրանց նպաստավոր ազդեցությունը ուսումնառության առարկայի բովանդակության յուրացման, սովորողների ընկալունակության և հետաքրքրվածության բարձրացման, վերլուծական, տրամաբանական, ստեղծագործական, քննադատական մտածողության, բանավոր և գրավոր խոսքի զարգացման, արժեքային ճիշտ համակարգի ձևավորման վրա:

Դիտարկումը կարվի կոնկրետ ուսումնական նյութերի դասավանդման առանցքում:

Թեմայի արդիականությունը

Կայծակնային արագությամբ փոփոխվող աշխարհը կրթության ոլորտի առջև մեծ, բարդ ու պատասխանատու խնդիր է դրել՝ ձևավորել մտածող, նախաձեռնող, նպատակասլաց, արժեքային բարձր ու կայուն համակարգ ունեցող անձնավորություն: Այսօր ուսումնական գործընթացի կազմակերպման հիմքում

ընկած են 3 կարևորագույն խնդիրներ՝ ***ի՞նչ սովորեցնել, ինչպե՞ս սովորեցնել, ինչու՞ սովորեցնել***:[3]

Դպրոցը պետք է օգնի և հնարավորություն տա երեխային բացահայտելու իր կարողությունները: Այստեղ է նա ձևավորվում որպես անհատ, այստեղ է հայտնաբերվում նրա ներուժը: Ոչ միայն ակադեմիական գիտելիք է ստանում, այլև նրա մեջ ձևավորվում և զարգանում են մարդու համար կարևորագույն հմտություններ ու կարողություններ՝ քննադատական մտածողության, ճկունության, գրավոր և բանավոր հաղորդակցության, տեղեկատվական որոնման և վերլուծության և այլն:

Աշակերտը շատ ավելի լավ կսովորի, եթե ուսումնառության ընթացքը հետաքրքիր կազմակերպվի, ունենա սովորելու մոտիվացիա և անձնական աճ: Իսկ ուսուցիչը պիտի աջակցողի դերում լինի, ստեղծի այն միջավայրն ու պայմանները, որտեղ կկարողանա սովորողը ինքնադրսևորվել և աճել: Այս ամենը կատարելու համար անհրաժեշտ գործիքներն են մեթոդներն ու հնարները:[3]

Ներկա օրերում շատ են հակադրում ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները: Իհարկե, ժամանակակից մոտեցումները դասը դարձնում են աշակերտակենտրոն, ուսուցումը՝ հետաքրքիր, մասնակցային, բայց չի կարելի բացառել ավանդական մեթոդների կիրառումը՝ ուսուցչի բացատրական խոսքը, հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը և այլն: Երկուսի խելամիտ կիրառումը, իրավիճակից և նյութի բովանդակությունից ելնելով, կարող է օգտակար լինել:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՒ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար կիրառվող մեթոդները, հնարները ընտրում ենք՝ ելնելով

ա. ուսուցման նպատակներից, խնդիրներից, բովանդակությունից,

բ. ուսուցման նյութի քանակից և բարդությունից,

գ. սովորողների պատրաստվածության մակարդակից,

դ. ուսուցման կազմակերպման պայմաններից,

ե. սովորողների տարիքային առանձնահատկություններից [6]

Ի վերջո, այտեղ մեծ դեր ունի նաև ուսուցչի պատրաստվածության մակարդակը:

Ուսուցման կազմակերպման ռազմավարություններից է ***ԽԻԿ*** համակարգը, որը խթանում է սովորողի քննադատական մտածողության, վերլուծական, տրամաբանական, ինքնուրույն եզրահանգումներ անելու կարողությունների, ստեղծարարության զարգացումը:

Խ-խթանում

Ի-իմաստի ընկալում

Կ-կշռադատում

Այս աշխատանքում կներկայացնեմ դասի տարբեր փուլերում (***խթանման, իմաստի ընկալման, կիրառման***) կիրառվող որոշ արդյունավետ մեթոդներ ու հնարներ:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Ցանկացած թեմայի ուսուցման առաջին քայլը կատարելիս ուսուցիչը իր համար նպատակ է սահմանում: Այդ նպատակում ներառվում է նաև սովորողի մեջ ձգտում (մոտիվացիա) առաջացնելը:

Շատ կարևոր է դասի մուտքը: Եթե առաջին իսկ րոպեներից ուսուցիչը կարողանում է գրավել աշակերտի ուշադրությունը, հետաքրքրություն առաջացնել, ապա թեմայի յուրացման համար ստեղծում է նպաստավոր, արդյունավետ ընթացք:

Առաջին փուլում (խթանում) վերհանվում են աշակերտների ունեցած գիտելիքները ներկայացվող նյութի մասին, նրանց ակտիվացնելով՝ ներգրավում ենք քննարկվելիք աշխատանքներում, առաջացնում հետաքրքրություն, շատ ավելին իմանալու ձգտում:

Ստորև ներկայացնում եմ դասի խթանման փուլում հաճախ կիրառելի մի քանի մեթոդներ ու հնարներ.

Բանավոր փոխադրություն

Ուսուցիչը կարդում է համառոտ տեքստը (այն կարող է լինել տեղեկատվական, խրատական-դաստիարակչական բնույթի, բայց անպայման հետաքրքիր և ինչ-որ կերպ դասի թեմային առնչվող):

Տեքստի բովանդակությունն ընկալելուց և բանավոր փոխադրելուց հետո սովորողները կատարում են բազմաբնույթ աշխատանքներ, որոնք տանում են դեպի նոր նյութը՝ գտնել և գրատախտակին գրել ամենակարևոր, ամենախոսուն բառը կամ նախադասությունը՝ անպայման հիմնավորելով, գրել անծանոթ բառերը, քերականական նյութի հետ կապվող բառերը և այլն:

Օրինակ՝ «Ածանցավոր բառերը» թեման 6-րդ դասարանում անցնելիս կարդում եմ «Խոսքը թռչուն է. թռավ բերանիցդ՝ չես կարող բռնել» վերնագրով փոքրիկ տեքստը՝ կազմված խոսքի մշակույթի վերաբերյալ մի քանի խորհուրդներից (այն կարելի է որպես խորհուրդների շարք ներկայացնել հաջորդ մի քանի դասերի ընթացքում): Տեքստը կարդալուց հետո՝

1. Աշակերտները թվարկում են բոլոր խրատները:
2. Գրատախտակին գրում են ***խոսք*** բառը, առանձնացնում արմատը և ածանցը, նշում արտահայտման խոսքի արտահայտման ձևերը՝ ***բանավոր*** և ***գրավոր***, կատարում բառակազմական վերլուծություն:
3. ***Հայերեն*** բառում ընդգծում են ածանցը՝ նշելով իմաստային նրբերանգը:
4. ***Հայերեն լեզու-հայերեն*** զույգում գտնում են սխալը, հիմնավորում:

Կամ 9-րդ դասարանում բարդ համադասական նախադասություն ուսումնասիրելիս մեջբերում եմ Խորենացու՝ Տիգրան Մեծին վերաբերող բնութագրումը: Տեքստը լսելուց և բովանդակությունը բանավոր ներկայացնելուց հետո՝

1. Ասում են՝ ում մասին է խոսքը, և ով է հեղինակը:

2. Ներկայացնում են բնութագրիչները:
3. Գրատախտակին գրում են առաջնորդի համար ամենաառաջնահերթ հատկորոշումը.

Չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը:

4. Որոշում են նախադասության տեսակը, և մտնում ենք թեմայի մեջ:

Մտագրոհ

Փոխներգործուն, խթանող, մոտիվացնող հրաշալի մեթոդ է, որի ժամանակ կարողանում ենք գեներացնել տվյալ թեմայի վերաբերյալ սովորողների ունեցած բոլոր մտքերը: Այստեղ կարևորը մտքերի քանակն է, նաև առանց երկար մտածելու արագ պատասխանելը, որն օգնում է ուսուցչին հասկանալու նաև նյութի վերաբերյալ աշակերտի ունեցած սխալ պատկերացումները: Մեթոդը կարող է կազմակերպվել և՛ գրավոր, և՛ բանավոր:

Աշխատանքը կազմակերպելիս առաջնորդվում ենք հետևյալ սկզբունքներով.

1. *Ցանկացած քննադատության բացակայություն*

   Մտքերի ազատ խոսք ենք ապահովում և գնահատականներ չենք տալիս:

2. *Գաղափարների խրախուսում*

   Խրախուսում ենք բազմատեսակ և շատ մտքեր արտահայտելը:

3. *Մասնակիցների հավասարություն*

Յուրաքանչյուր աշակերտ պատշաճ ուշադրության պիտի արժանանա, որը մտքեր արտահայտելու շահագրգռվածություն կառաջացնի: Երբեմն կարելի է խմբային քննարկումներ թույլ տալ:

4. *Զուգորդումների ազատություն*

   Մտքերի տարափ է պետք ապահովել, սահմանափակումներ պետք չեն, որովհետև միտքը միտք է ծնում:

5. *Բոլոր մտքերի գրառում*

Աշակերտների արտահայտած բոլոր մտքերն առանց վերաձևակերպման գրանցվում են գրատախտակին կամ թղթի վրա:

Մեթոդի կիրառումը զարգացնում է սովորողների ստեղծագործական մոտեցումը, երևակայությունը, օգնում է նվազեցնելու աշակերտների երկչոտությունը, ուժեղացնում աշակերտների ինքնավստահության զարգացումը: [4]

Օրինակ՝ 6-րդ դասարանում «Համառոտագրություն» թեման անցնելիս կարելի է կազմակերպել մտագրոհ՝ **համառոտագրություն** բառով:



Մտքերի տարափը գրանցելուց և տեսակետները լսելուց հետո ցանկացողներին հնարավորություն է տրվում ձևակերպել սահմանումը, օրինակների հիման փորձել ներկայացնել նաև համառոտագրության կանոնները:

Մեջբերումներ

Շատ արդյունավետ միջոց է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել թևավոր խոսք, խրատ, առակ, իմաստնություն, նույնիսկ հանելուկ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն: Ներկայացնենք մի քանի օրինակներ, որոնք կարելի է օգտագործել հայոց լեզվի ժամերին: Այդ մեջբերումները ոչ միայն կապվում են ուսումնասիրվելիք քերականական նյութի հետ, այլև իմաստային տեսակետից կապվում են պատմության, գրականության կամ այլ առարկաների հետ, որոնք կարող են աշխարհայացք ձևավորել, մտահորիզոն ընդլայնել, դաստիարակել, որոշակի տեղեկատվական հոսք ապահովել:

- *Ոչ մի պաշտոն ու կոչում չկա, որը հավասար լինի և կարելի լինի համեմատել մարդ կոչման հետ:*

  Հովհ. Թումանյան

- *Երբ դու դատում ես մարդկանց, քեզ մոտ ժամանակ չի մնում նրանց սիրելու համար:*

  Մայր Թերեզա

- *Իմ հոգին զույգ հենարան ունի՝ Աստված և հայրենիք: Նա, ով ընդունում է Աստծո գոյությունը, ընդունում է նաև իր պարտականությունը հանդեպ գերագույն իրականության՝ Ազգ, Հայրենիք, Պետություն:*

  Գ. Նժդեհ

- *Բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումությունից: Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգետը զրկվում է կատարյալ կյանքից:*

  Եղիշե

- *Խորհուրդ լսիր և խրատ ընդունիր, որպեսզի հետին ժամանակումդ իմաստուն լինես:*

Գիրք Առակաց

- *Անունը ավելի ընտիր է շատ հարստությունից, արծաթից ու ոսկուց շնորհքն է լավ:*

Գիրք Առակաց

- *Երկի՛ր իմ աղետավոր,*
  Ասում եմ՝ տոկա համառ.
  Գալու է հարության օր:

Վ. Տերյան

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

Այս փուլում հաղորդվում է նոր նյութը, տեղեկատվությունը կամ գաղափարը: Իմաստի ընկալման փուլի նպատակներն են.

- սովորողի մոտ հետաքրքրության աճի պահպանում,
- տեղեկատվության ընկալման ապահովում,
- նոր և հին տեղեկատվության շաղկապում և իմացության նոր կառույցի ստեղծում:

Այս փուլում կիրառելի են հետևյալ մեթոդները՝Т-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզ, Վենի դիագրամ, խճանկար, երեք բանալի ու մեկ կողպեք, շրջագայություն պատկերասրահում, պատկերի ակնթարթային դիտում և այլն:

Պատկերի ակնթարթային դիտում

Լուսանկարների, կտավների կամ այլ պատկերապատումների հետ սոսկական ծանոթությունը կարող է սովորողների համար ձանձրալի լինել: Մինչդեռ այդպիսի աղբյուրները վերլուծական հարուստ տեղեկություններ են պարունակում:

Այդպիսի աղբյուր ցուցադրելու փոխարեն կարող ենք սկսել քննարկումը դատարկ էկրանով:

1. Սովորողներին տեղեկացնում ենք, որ 5 վայրկյանով (կամ մի քիչ ավելի) պատկեր/պատկերների շարք ենք ցույց տալու, որից հետո էկրանն անջատելու ենք,

որպեսզի նրանք քննարկեն, թե ինչ են մտապահել տվյալ պատկերի/պատկերների վերաբերյալ:

2. Պատկերը ցույց տալուց հետո անջատում ենք էկրանը:

3. Այն տեսնելուց հետո սովորողները պետք է ինքնուրույն կամ խմբերով քննարկեն տեսածը:

Կարող ենք տալ աջակցող հարցեր, օրինակ, ***ո՞վ է պատկերված, ի՞նչ ժամանակաշրջանի գործ է, որտե՞ղ է ստեղծվել*** և այլն:

Քննարկումներից հետո նկարը կրկին ցուցադրում ենք՝ ավելի մանրամասնորեն դիտելու և քննարկելու համար: Հղում անելով սովորողների առաջ քաշած վարկածներին՝ ամփոփում ենք: [5]

Մեթոդի շատ հաջող կիրառում իրականացրել ենք 6-րդ դասարանում Վիգեն Խեչումյանի «Գլուխգործոցո» պատմվածքն ուսումասիրելիս: Մոմիկ վարդպետի մասին սեղմ ու ամփոփ տեղեկություն տալուց ու թեման բացելուց, որոշ ուղղորդող աշխատանքներ կատարելուց հետո կազմակերպում ենք պատկերի ակնթարթային դիտում՝ իրար հաջորդող 3 լուսանկարներով՝ Նորավանքի, խաչքարի և ծաղկած մատյանի (3-ի հեղինակն էլ Մոմիկ վարդպետն է): Այնուհետև տրվում են աջակցող հարցեր՝ ***ի՞նչ տեսան, ինչու՞ են հենց այդ երեք պատկերները ներկայացվել, ո՞վ է այդ երեք պատկերների առանցքում:***

Քննարկումն ավարտելուց և ամփոփելուց հետո կրկին դիտում ենք այդ պատկերները և կիսվում տպավորություններով:

Աշխատանք կենտրոններով

1. Խմբերը ստանում են տեքստը (օրինակ՝ Չարլի Չապլինի նամակը դստերը) և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին:

Կենտրոններ

- ***Հետազոտողների*** – Ընթերցում են տեքստը և օգտվելով համացանցից, գրականությունից՝ լրացուցիչ հետաքրքիր նյութ հայթայթում:
- ***Ստեղծագործողների*** – Տեքստը փորձում են ներկայացնել բեմականացմամբ, պաստառի, հարցազրույցի ձևով:
- ***Գրավոր աշխատանքի*** – Ընթերցում են տեքստը և իրականացնում բառային աշխատանքներ՝ պահանջին համապատասպան:

- ***Բացահայտողների*** – Կարդում են տեքստը, կատարում նշումներ, վերհանում հիմնականը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:

Աշխատանքի համար սահմանվում է ժամանակ: Ավարտին խմբերը միմյանց են ներկայացնում աշխատանքը:

Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում: Դրանից խուսափելու համար կարելի է առաջարկել աշխատանքի վերջում յուրաքանչյուրը ներկայացնի սեփական ներդրում:

Ասա մի բան, որի մասին չգիտենք

Եթե ցանկանում ենք խաղի միջոցով սովորողների մեջ զարգացնել որևէ թեմայի շուրջ եղած փաստային իմացությունն ու վերլուծական հմտությունները, ապա նրանց հետ կազմակերպում ենք «Ասա մի բան, որը դեռ չգիտենք» խաղը:

Այս ռազմավարությամբ աշխատելիս կատարում ենք հետևյալ քայլերը:

1. Ուսումնասիրվող նյութի վերաբերյալ սովորողները նախապես ինքնուրույն կամ խմբով պետք է որևէ նոր գիտելիք «հայտնաբերեն»:

2. Հայտնաբերված գիտելիքը նրանք հայտնում են մյուս սովորողներին՝ միավորներ ստանալով:

3. Խաղի վերջում ամենաշատ միավոր հավաքած թիմը հաղթող է ճանաչվում: [5]

Օրինակ՝

Թեման՝ ***«Հովհաննես Թումանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը»:***

Սովորողներին նախօրոք տրվում է հանձնարարություն:

- Նկարագրի՛ր – Ի՞նչ փոթորկալից իրադարձությունների կենտրոնում էր հայտնվել Թումանյանը 20-րդ դարի սկզբներին:
- Բացատրի՛ր – Ինչպե՞ս էր Թումանյանն արձագանքում այդ իրադարձություններին:
- Գնահատի՛ր -
    - Թումանյանի գնահատականն այդ իրադարձություններին
    - Ժողովրդի գնահատականը Թումանյանի գործունեությանը
    - Քո գնահատականը

Հանձնարարվածը կատարելուց հետո սովորողներին դասարանում բաժանում ենք 4-5- հոգանոց խմբերի ու սկսում խաղը:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Կշռադատման փուլում ուսուցչի դերը հիմնականում հուշելը, ուղղորդելը, կարգավորելն է: Նրա օգնությամբ սովորողը հանրագումարի է բերում իր գիտելիքները, նորը դարձնում է իր սեփականությունը: Սովորողը կարողանում է իր ստացած տեղեկատվությունները սեփական ձևակերպումներով ներկայացնել, նոր գիտելիքները համադրել ունեցածի հետ, կիրառել գործնական աշխատանքում, ինքնուրույն վերլուծել և վերացարկումներ անել:

Ներկայացնեմ այս փուլում կիրառելի մի քանի մեթոդների նկարագրություն կոնկրետ ուսուցանվող թեմաների համատեքստում:

Վեբ-որոնում

Ժամանակակից կյանքն ու հասարակությունը պահանջում են նոր մոտեցումներ՝ սովորողների ակտիվ ներգրավվածության ապահովում, նոր տեխնոլոգիաներով հարուստ ուսումնական միջավայրի ստեղծում: Հատկապես ՏՀՏ-ի ճիշտ, նպատակային կիրառումը հարստացնում է կրթական միջավայրը՝ առաջացնելով գրավչություն, հետաքրքրվածություն, մղելով նորանոր հայտնագործությունների, նաև օգնելով կազմակերպել աշակերտակենտրոն ուսուցում:

Այս համատեքստում ուսուցչի աշխատանքը ավելի է մեծանում և կարևորվում, ոչ միայն դասագրքերով ներկայացված ակադեմիական գիտելիքն է ուսուցանում, այլև այս կամ այն մեդիա միջոցն է ընտրում, ուղղորդում, ղեկավարում, գնահատում, երբեմն էլ ուսուցումը կազմակերպում տարածության մեջ:

Վեբ-որոնումը հետազոտական աշխատանքի վրա հիմնված ուսումնասիրություն է, որի ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքները, տեղեկատվությունը հիմնականում ստացվում է համացանցից՝ կայքեր, ուսումնական ռեսուրսներ, գրադարաններ, բառարաններ և այլն:

Ուսուցիչը հստակ ձևակերպում է հարց-խնդիրը, որը մղում է ուսումնական նյութի խորացված ուսումնասիրման, բացատրում է խնդրի լուծումը գտնելու

կարևորությունը, տեղեկատվական աղբյուրները, արդյունքների ներկայացման ձևաչափը և հետազոտության գնահատման չափանիշները քննարկում է աշակերտների հետ: [5]

9-րդ դասարանում «Գրերի գյուտին հաջորդող գրական-մշակութային շարժումը» ակնարկային թեմայի ժամանակ հանձնարարում եմ խմբային հետազոտական աշխատանք: Ելակետային խնդիրն է հավատքի և երկու հզորագույն առաջնորդների՝ Վարդան Մամիկոնյանի և Վահան Մամիկոնյանի (Գայլ Վահան) կյանքի հետագծի ազդեցության վերհանումը ազգային-բարոյական նկարագրի կերտման վրա: Դասարանը բաժանվում է հետազոտողների 3 խմբի՝ «Ագաթանգեղոս», «Եղիշե», «Ղազար Փարպեցի»:

Աշխատանքի նպատակը, հանձնարարականների սահմանը և աղբյուրները ճշտելուց, ներկայացման ժամկետը, ձևաչափը և գնահատումը քննարկելուց հետո հանդես եմ գալիս միայն որպես դիտորդ, հրահանգիչ, խորհրդատու, երբեմն էլ՝ վերահսկող: Աշակերտներին հնարավորություն է տրվում տեղեկությունը որոնել և ներկայացնել ըստ իրենց համար ունեցած կարևորության աստիճանի, նախասիրությունների:

Աշխատանքը ներկայացնում են տեսասահիկով՝ փուլ առ փուլ բացահայտելով հեղինակին, ժամանակաշրջանը, պատմություն կերտող հզոր անհատներին՝ վերհանելով 4-5-րդ դարերի պատմությանն ու մատենագրությանն առնչվող և իրական կյանքում հանդիպող խնդիրների կապը, լուծումը:

Դրված էր հիմնահարց՝ ***ի՞նչ ազդակներ, դասեր են գալիս մեզ 4-5-րդ դարերից, և որքանո՞վ ենք մենք ընդունում դրանք, որքանո՞վ են արդիական:***

Ես հասկացա, որ աշխատանքն իրականացնելու ընթացքում այս խնդրի լուծումն էր ավելի շատ հետաքրքրում աշակերտներին: Հիմնահարցը մեծացրել էր սովորողների սովորելու ձգտումը. չէ՞ որ շատ մոտ էր իրական կյանքին:

Երկու կարևորագույն խնդիր իրականացվեց այս ընթացքում: Նախ՝ խթանվեց սովորողների ինքնազարգացման ձգտումը՝ նոր գիտելիքներ, նոր փորձ ձեռք բերելով, և այդ գիտելիքները կիրառելով, սեփական դիրքորոշումն արտահայտելով: Այնուհետև ապահովեց սովորողների՝ տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու և համագործակցային հմտությունների, վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Կերպարային «մինչև» և «հետո» քարտեր

Կերպարային **«մինչև»** և **«հետո»** քարտերը սովորողներին կօգնեն դիտարկելու որոշ գրողների վարքագիծը, հուզական, բարոյահեբանական վիճակը պատմական խոշոր իրադարձություններին նախորդող և հաջորդող ժամանակահատվածներում:

Օրինակ՝ «Եղիշե Չարենց» թեման ամփոփելիս կիրառում ենք այս մեթոդը: Քարտերում ներառում ենք նախնական այնպիսի տեղեկություն և վերլուծական հարցեր, որոնք ուրվագծում են նրա մտադրությունները, հուզական վիճակն ու շահերը տվյալ ժամանակաշրջանի սկզբում և հետո:

Քարտերը վիճակահանությամբ բաժանում ենք դասարանին:

Վերլուծելու ժամանակ ենք տրամադրում: Դրանից հետո սովորողները ներկայացնում են նախ **«մինչև»** քարտը, ապա **«հետո»** քարտը: Այդ ընթացքում մյուսներն իրենց նոթատետրերում գրում են երկու հարցի պատասխան.

1. *Ինչպե՞ս է կերպարն իրեն զգում տվյալ հանգամանքներում:*
2. *Ապագայի հանդեպ ի՞նչ զգացողություններ ունի:*[5]



Եղիշե Չարենց

Աղբյուրը՝ Վիքիպեդիա

«Մինչև» քարտ

Դուք Եղիշե Չարենցն եք՝ 23-24 տ.: Ծնվել եք Կարսում 1897թ.: 1908-12թթ. սովորել եք Կարսի ռեալական ուսումնարանում և հեռացվել ուսման վարձը վճարել չկարողանալու պատճառով: 1914թ. լույս է տեսել Ձեր բանաստեղծությունների առաջին գիրքը՝ «Երեք երգ տխրադալուկ աղջկան»: 1915 թ. զինվորագրվում եք հայ կամավորական գնդերից մեկում և հասնում մինչև Վան: Ձեր տեսածի, ապրածի ու

զգացածի յուրահատուկ արտահայտությունը դարձավ Ձեր «Դանթեական առասպել» պոեմը:

1919թ. աշնանը ուսուցչություն եք անում Կարսի մարզի գյուղերից մեկում: 1920թ. արդեն Երևանում եք ու հայտնի գրող:

- *Ինչպիսի՞ զգացողություններ ու կանխատեսումներ ունեք ապագայի վերաբերյալ:*
- *Ի՞նչ կարծիք ունեք տեղի ունեցած և ունեցող իրադարձությունների վերաբերյալ:*
- *Այս ամենի անդրադարձը Ձեր ստեղծագործության վրա:*

«Հետո» քարտ

Դուք Եղիշե Չարենցն եք՝ 36-37տ.: Լինելով բռնկուն, ազատ ու անկեղծ տարերքի տեր բանաստեղծ՝ ստեղծել եք բազմաթիվ հանճարեղ գործեր, որոնց առանցքում սերն է հայրենիքի ու կնոջ հանդեպ, կորուստների ցավը՝ նախ հայրենիքի, հետո՝ Արփենիկի: Մինչև այս պահը Ձեզ ապրեցնողը հայրենիքի վերածնության տեսլականն է եղել:

- *Ինչպիսի՞ զգացողություններ ու մտքեր ունեք:*
- *Ի՞նչ կարծիք ունեք տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ:*
- *Ի՞նչ է փոխվել Ձեր կյանքում ու աշխարհայացքում:*

Գնահատման առցանց գործիքներ

Կրթության մեթոդաբանության մաս են կազմում նաև գնահատման ձևերը, որոնք ակտիվացնում են սովորողի իմացական գործունեությունը, բարձրացնում ուսման արդյունավետությունը և որակը, ուսուցչին հանարավորություն տալիս պարզելու յուրաքանչյուր աշակերտի, խմբի ձեռքբերումները, ինչպես նաև դժվարություններն ու բացթողումները և օգնում շտկել դրանք:

Գնահատման հիմնական տեսակների իրականացումն ավելի հետաքրքիր, պատկերավոր է լինում, եթե իրականացվում է ինտերակտիվ,առցանց, ՏՀՏ գործիքների կիրառմամբ:

LearningApps գործիքը ինտերակտիվ վարժությունների (թեստ, ռեբուս, խաչբառ, վիկտորինա և այլն) ստեղծման և ուսուցանող գնահատում իրականացնելու հարթակ է, ունի վարժությունների ձևաչափերի լայն ընտրանի: Այս գործիքի կիրառման արդյունքում կունենանք պատրաստի առաջադրանքներ, աշակերտների և ուսուցչի

առցանց համագործակցություն, ստեղծված վարժություններն առցանց հղմամբ տարածելու հնարավորություն:

Միավորային գնահատման մեծ հնարավորություն է տալիս ***Google Forms*** առցանց գործիքը, որի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների համաժամանակյա և տարժամանակյա գնահատում: Սովորողը պետք է ունենա համապատասխան հարցման թեստի հղում և համացանցին միացած ցանկացած գործիք:

Աշխատանքի ավարտին հնարավորություն է տրվում կատարելու սովորողների գնահատականների և առաջադրմության ամփոփ վերլուծություն: Կարելի է կազմակերպել միջոցառման առցանց գրանցում, հետազոտություն, հետադարձ կապի հավաքագրում, քվեարկություն, տարաբնույթ թեստեր և այլն:

Quiziz առցանց գործիքի տիրույթում աշխատելիս կարողանում ենք գնահատել սովորողների կատարած աշխատանքի թե՛ արագությունը, թե՛ ճշտությունը:
Այս ՏՀՏ ռեսուրսներն ուսուցչին հնարավորություն են տալիս անարգել իրականացնելու համագործակցային աշխատանքներ տանը և դասարանում՝ տալով նաև անհատական հրահանգներ, առանձին մոտեցումներ ցուցաբերել խմբերին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Ուսուցման արդյունավետ մեթոդներ և հնարներ» թեմայով կատարել ենք հետազոտություն, որի ընթացքում օգտվել ենք զրույցի, դիտարկման, վերլուծական-համադրական մեթոդներից: Դիտարկումը կատարել ենք թե՛ առարկայի դասավանդման ընթացքում ավանդական ու ժամանակակից փոխներգործուն մեթոդները գործարկելիս, թե՛ աշակերտների հետ զրուցելիս՝ լսելով նրանց կարծիքը և գնահատականը ուսուցման այս կամ այնմոդելի կիրառման վերաբերյալ:

Հարցումը և դիտարկումը կատարվել է՝ հասկանալու համար, թե ո՞ր մեթոդի կիրառումն է բերում ցանկալի արդյունքի:

Վերլուծելով ու համադրելով սեփական դիտարկումներն ու սովորողների կարծիքը՝ հետևյալ պատկերն ստացանք:

- Սովորողների մեծամասնությանը դուր են գալիս ինտերակտիվ, համագործակցային, աշակերտակենտրոն դասերը, երբ ստացած գիտելիքն ըմբռնելուց, կիրառելուց, արժևորելուց հետո կարողանում է սեփական արդյունքն ստեղծել կամ տեսակետը ձևավորել, երբ իրենք դիտարկվում են իբրև դասի կենտրոնական դեմք:
- Չեն բացառում նաև ուսուցչի գործոնը, նրա խոսքի ներգործուն ուժը, մասնագիտական և մեթոդական պատրաստվածության ու մարդկային նկարագրի ազդեցությունը դասարանի վրա:
- Ավանդական ու ժամանակակից մեթոդների խելամիտ, ներդաշնակ, խիստ տեղին կիրառմամբ է ստեղծվում բարենպաստ, հետաքրքիր կրթական միջավայր, որտեղ խթանվում է սովորողների սովորելու ձգտումը և ձևավորվում են սովորելու հմտությունները: Կարևորվում է ոչ թե գիտելիքի պահեստավորումը, այլ ուղեղը աշխատեցնելը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դասի ճիշտ մեթոդաբանությունն ապահովում է համագործակցային ուսումնառության նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում, կրթական պահանջմունքների ակտիվացում, անցած նյութի հետ նորի զուգորդում, նոր գիտելիքների ձեռքբերում, ըմբռնում, կիրառում, վերլուծում, արժևորում, գնահատողական վերաբերմունքի դրսևորում, միջառարկայական կապերի գիտակցում և այլն:

Ուստի կրթական տեխնոլոգիաների ու մեթոդների ընտրությունը և այդ գործիքակազմի կիրառումը պիտի լինի հանգամանորեն մտածված, պատճառաբանված՝ կախված ուսումնական նյութի բարդությունից, ծավալից, ժամաքանակից, ստեղծված իրավիճակից՝ սովորողների հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին հարմարեցված:

Այսօր կարևորագույն հարցերից է նաև այն, թե կրթական բարեփոխումների պայմաններում որքանով է ուսուցիչը պատրաստ ուսուցման մարտավարությունների և նոր մեթոդների ընտրությանն ու կիրառմանը:

Ուսուցչի աշխատանքը ենթադրում է կատարելագործման շարունակական ընթացք:

Մասնագիտական զարգացումը, հմտությունների և գործիքների բարելավումն են տանում հաջողության: Առաջնահերթ նշանակություն ունի աշակերտին դասին ներգրավելը, նաև դասաժամի կազմակերպման ձևերի բազմազանությունն ապահովելը, տարբեր մեթոդների և հնարների նպատակային կիրառումը, որոնցով դասը ոչ միայն դառնում է սպասված, այլև անակնկալներով լի և հետաքրքիր:

Յուրաքանչյուր դասի հաջողությունը չափեի է այն վերջնարդյունքով, թե որքանով են սովորողները կարողանում կատարել չափորոշչային պահանջները, որքանով են ուսուցիչները և աշակերտները հասել սահմանված նպատակին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շալվա Ամոնաշվիլի, Շտապե՛ք, երեխանե՛ր, թռչել ենք սովորելու, Մոսկվա, 2005
2. Амонашвили Ш. А., Вера и любовь, Москва, 2009
3. Ս. Խաչատրյան, Կամուրջներպատերիփոխարեն, Երևան, 2014
4. Ուսուցմանժամանակակիցմեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008
5. Գիրքպատմությանուսուցման. ինչու՞, ինչպե՞ս, «Պարադիգմա»կրթականհիմնադրամ, 2020
6. Ս. Խաչատրյան, Ուսուցմանարդյունավետհնարներ, Երևան, 2020